ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵԽԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ

ПОЛИЦИЯ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

"ЦЕНТР РАЗВИТИЯ РЕБЕНКА"
ГНКО

0025, ք. Երևան, Նալբանդյան 106/1
հեռ. 012-21-00-11

0025, г. Ереван, ул. Налбандяна 106/1
тел. 012-21-00-11

1321 24.09.2021թ.

<<Կամի Գրուպ>> ՍՊԸ (ՀՎՀՀ 00927968)
Ք.Երևան, Ա.Սիսակյան 62/3
էլ. հասցե՝ kamigroup77@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

ՀՀ ոստիկանության <<Երեխայի զարգացման կենտրոն>> ՊՈԱԿ-ի և ''Կամի Գրուպ'' ՍՊԸ-ի միջև 25 հունվարի 2021թ-ին կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ՍՈՒՆԴ-2021/1-2 ծածկագրով սննդի գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում ''Կամի Գրուպ'' ՍՊԸ-ն ստանձնած պարտավորությունները չի կատարել, չի մատակարարել պայմանագրով սահմանված 11860 հատ հավկիթ-1, որի ընդհանուր գումարը կազմում է 676 020 /վեց հարյուր յոթանասունվեց հազար քսան/ ՀՀ դրամ:

Համաձայն Պայմանագրի 2.1.7-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի մասնակի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի նույն կետի «բ» ենթակետի համաձայն Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 16-րդ ենթակետը և Պայմանագրի 8.8-րդ կետը՝ ՀՀ ոստիկանությունը մասնակի միակողմանի լուծում է ՀՀ ոստիկանության և

''Կամի Գրուպ'' ՍՊԸ -ի միջև 25 հունվարի 2021թ.ին կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ՍՈՒՆԴ-2021/1-2 ծածկագրով Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի մասնակի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

''Կամի Գրուպ'' ՍՊԸ-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները ներկայացվելու է լիազոր պետական մարմին:

Մատակարարի կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի համաձայնագիրը՝ որակավորման ապահովում և Պայմանագրին կից ներկայացված վճարման պահանջագիրը, սահմանված կարգով, կներկայացվի «Ինեկոբանկ» ՓԲ ընկերություն՝ տուժանքի համաձայնագրով սահմանված գումարը՝ 676 020 /վեց հարյուր յոթանասունվեց հազար քսան/ ՀՀ դրամ, և տուժանքի համաձայնագիրը՝ պայմանագրի ապահովում և Պայմանագրին կից ներկայացված վճարման պահանջագիրը, սահմանված կարգով, կներկայացվի «Ինեկոբանկ» ՓԲ ընկերություն՝ տուժանքի համաձայնագրով սահմանված գումարը՝ 67 602 /վաթսունյոթ հազար վեց հարյուր երկու/ ՀՀ դրամ ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչության N 900005000758 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

ՀՀ ոստիկանության <<Երեխայի զարգացման կենտրոն>> ՊՈԱԿ-ի տնօրեն ***Լ.Գալստյան***

Կատարող՝ Ը.Փահլևանյան
Հեռ. 59-60-39